

կերպով աշխատած է, թէ իբրեւ գրիչ կատարելով բազմաթիւ ընդօրինակութիւններ ձեռագիրներու եւ թէ կազմելով եւ փրկելով կարգ մը ձեռագիրներ որոնք կորսուելու գատապարտուած էին:

Ասկէ զատ անիկա գործած է իբր ուսուցիչ և հասուցած է բազմաթիւ աշակերտներ, որոնցմէ մեզի հասած են յիշատակարաններ որոնք երախտեօք կը յիշեն իրենց ուսուցիչը և վարպետը:

Ան 1553 Յունվար 4ին Կեսարիոյ Ս. Կարապետի վանքն է ուր կը նորոգէ Աւետարան մը (այժմ Վենետիկ): 1562 ին կը գրէ Շարահնոց մը «ի յերկիրս Գաւրաց ի գիւղս Խնձորի» (Էջմիածնայ մատենադարան Թ. 1612): 1574 ին դարձեալ Ս. Կարապետի վանքն է ուր կը գրէ Մաշտոց մը և 1578 ին՝ Սեբաստիա ուր կը կազմէ 1389 ին գրուած Ճաշոց մը (Թորգոմ արքեպս. Յուսէ Զեռաբեց Սեբաստիոյ ՀԱ. 1926, էջ 240) և 1579 ին՝ Թումարզայի Ս. Աստուածածին վանքը՝ ուր կը կազմէ 1222 ին ի Սիւս գրուած Աւետարան մը: 1580 ին կը տեսնենք զինքը Առաջնորդ Թումարզայի Ս. Աստուածածին վանքին (Բիւշնդէն Թ. 3073) ուր սակայն շատ կարճ պաշտօնավարութիւն մը կ'ունենայ, վասնզի նոյն ուխտին առաջնորդութեան աթոռին վրայ 1582 ին